ՅՈՒՆՈՒԱՐԻ ՀԱՆԵԼՈՒԿԻՆ ՄԵԿՆՈՒԹԻՒՆԸ

Այս տարուան Յունուար ամսոյն մէջ դրած հանելուկնիս շատերուն բարակամտութեանը փորձաքար մը եղած է անշուշտ. մենք դեռ մէկ հանճարեղ անձի մը տուած մեկնութիւնը ընդունեցանք Պօլիսէն, որ հոս կը դնենք։

Ուրիշ ուսումնասէր անձէ մը՝ն ալ գիր առինք նոյնպէս Պօլիսէն, որ կ'ըսէ թէ ինքը նոյն հանելուկին մեկնութիւնը գտեր է. խոստացանք իրեն, ու կը հաստատենք խոստմունքնիս, որ իր մեկնութիւնն ալ սիրով կը հրատարակենք։

Մ՝ԵԿՆՈՒԹԻՒՆ։

"Այս հանելուկը ընդհանրապէս ստրկի վրայ է, և մեկնութիւնը կը յարմարի Անգլիոյ կինէ ըսուած ոսկիին, կամ լաւ ևս՝ Միլանու կէս ոսկիին որ ֆէոֆէօ կ'ըսուի։

Այս ինծի՝ իմ ամբողջ ոսկի դրամիս (որ պօֆֆէօ կ'ըսուի) որդի եմ, այսինքն անկէ ելած՝ անոր կէսն եմ. հայր՝ արծաթի Ա՝ահան անուանեալ ստրկին, և հա՝ անոր պղինձ ստակներուն. և եղբայր ինծի նման ուրիշ ոսկիներուն։ Այս կոյս եմ, զուտ ոսկի ըլլալովս, և դայեակ ան ամէն նիւթոց որոնք օծելով կ'ազնուացընեմ՝ ժանգերէ կը պահեմ, և դայեկաբար կը գրկեմ կը մնուցանեմ, իմ գոյութիւնս իբր տալով անոնց։ Մ՝ոռոսէն Ա՝մայր. ասով դրամին վրայի թագուհոյն պատկերը կ'իմանայ. կամ թէ ծնող եմ ուրիշ մանր ստակներու։ Ա՝նարգ եմ, մէկ հանք մը. չեմ հոգի, չեմ աւաքինութիւն, և այլն. ու զիս անոնցմէ ամենէն վեր դասելով կը խնդրէ աշխարհս։

Ա՝ի՛շապ եմ անգո՛ն. արծի՛ս. դրամին վրայի դրոշմածները կը ցուցնէ։ Այս ծառայ չար. աս խօսքս կամ դրամին մէկ պատկերը կը նշանակէ, կամ որովհետև ստակը իր տիրոջը ծառայութեանը մէջ՝ կը սպասէ միշտ անոր հրամանացը, շարունակ կը վարուի չարաչար աշխատանքով մէկ տիրոջմէն մէկալին՝ ամէն տեսակ ախտաւոր մարդկանց քով, կը բանտի վրայէ վրայ ձգուելով մութ տեղեր, և շատ անգամ՝ի չարն կը գործածուի։

Լաւն եմ, դրամին նիւթը, ոսկի, փլաթին, արծաթ, պղինձ, թուղթ, կաշի, և ոսկեպատ կամ արծաթապատ այլ հանք մը։ Այս յորձամ լինիմ անչնաոպան՝ ժանտաջրով՝ մնդիկով, և այլն, զժանգ, զբիծս, զտգեղութիւն այլնիւթոց օծելով սրբել կարող եմ։ Օ՝ի՛մ ընկերանս բարձրաղաղ չէ՛ի մէջ մարդկան, զի անապական և անծախս եմ, և՝ի սկզբանէ և այսր միշտ անեղծ եմ։

Հողէ՝ Ա՝ը՝, խառն և իբր անկատար հանք. Ա՝ կեամ ես այլով, այսինքն հրով զտեալ։ Ա՝ահկանացո՝ եմ որպէս զայլ ամենայն նիւթեղէն արարածս. չեմ անմահ հոգի, միտք. բայց ոչ եմ պոպեալ ոսկերօտ։

Այնչ դո՝ ցանկաս մեծամեծ շահո՝ց, Ռոշ զիս ըսպանցէ ոմն՝ի մե՝ելոց, Ա՝ եղէց ճարակ աղքատկոյց էմոց։ Ա՝այս հատուածը շատ դժուար կը մեկնուի. բայց այսպէս կրնանք բացատրել։ Այթէ կ'ուզես որ դիզուած ստակը շատ շահ բերէ, սպասէ որ տէրը մեռնի, ու ան ոսկիները մանր ստակ ըլլալով բաժնուին։ Այս կամ այսպէս. եթէ դու ցանկաս մեծամեծ շնորհաց հանիլ, կրօնաւորութիւնը մեռեալդ յաշխարհէ՝ սպան զոսկի, զարծաթսիրութի՝ի սրտիդ, և զնոյն ինքն զոսկին՝ի քէն, և նա եղիցի ճարակ արծաթասիրաց՝ որոնք կեանք կը համարին իրենց ոսկին, և երջանկութիւն և աստուած, և կը պարարին անով, և անբան տարերց կը նմանին իբրև ազգակից՝ իրենց անբանական անզգայ սխտովը՝՝։

ճ